

ԴԻՍՈՐԴ - 2015

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԱՆՅՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ 40 ՀԱՉԱՐԻՑ ԱՎԵԼԻ Է



2015 թվականի միասնական ազգային քննությունների համար արդեն գրանցվել է ավելի քան 40 հազար դիմորդ, թեպետ նրանք կարող են բուհերի եւ մասնագիտությունների ընտրությունը կատարել քննություններ հանձնելուց հետո: Այս տարի Միասնական ազգային քննությունների համակարգում իրականացված նորամուծությունների հարցով մենք հանդիպեցինք քննությունների կենտրոնի ղեկավար Մայա Միմինոշվիլու հետ:

- Տիկին Մայա, Միասնական ազգային քննությունների համար դիմորդների գրանցումն արդեն ավարտվել է: Քանի՞ դիմորդ է արդեն գրանցվել, եւ, նախորդ տարիների համեմատությամբ, թվաքանակության փոփոխությունն նկատվե՞լ է, արդո՞ք:

- Այս տարի Միասնական ազգային քննությունների համար արդեն գրանցվել է ավելի քան 40 հազար դիմորդ: Միաժամանակ, 12600-ից ավելի դիմորդներ գրանցվել են մագիստրատուրայի համար, եւ ավելի քան 5 հազար դիմորդ կմասնակցի դրամաշնորհային մրցույթին: Այնպես որ, գրանցված դիմորդների թիվը, նախորդ տարվա համեմատությամբ, ավելացել է: Հիշեցնեմ, որ անցյալ տարի քննությունների համար գրանցում էր անցել 35 հազարից մի փոքր ավելի դիմորդ:

- Ե՞րբ կսկսվեն Միասնական ազգային քննությունները, եւ ի՞նչ նորամուծություններ են ներդրվել այս տարի:

- Այս տարի Վրաստանում Միասնական ազգային քննությունները կմեկնարկեն հուլիսի 2-ին: Ավարտվում է տվյալների բազայի հստակեցումը, դիմորդների բաժանումն ըստ քննական կենտրոնների, կազմվել են քննությունների հանձնման ժամկետների եւ մասնակիցների հաշվառմամբ ցուցակները:

Ըստ ժամանակացանկի, Միասնական ազգային քննությունները, ինչպես արդեն նշեցին հուլիսի 2-ին կմեկնարկեն վրաց լեզվի ու գրականության քննությամբ եւ կավարտվեն հուլիսի 22-ին քիմիայի քննությամբ:

Մագիստրոսի թեկնածուների քննությունները կսկսվեն հուլիսի 9-ից, իսկ դրամաշնորհների հավակնող ուսանողների քննությունները՝ հուլիսի 20-ից:

Երկրի մասշտաբով, կգործի քննական 19 կենտրոն՝ Բաթումիում, Փոթիում, Օզուրգեթիում, Քութայի-փիում, Ախալցխեում, Գորիում, Թբիլիսիում, Ռուսթավիում, Թելավիում եւ Խուլդյում:

Ինչ վերաբերում է նորամուծություններին, ապա այս տարի փոփոխություններն անշուշտ են: Դրանք արդեն նշվել են քննությունների կենտրոնի պաշտոնական կայք-էջում: Մասնավորապես, նվազեցվել են առանձին առարկաների հաշվով միավորների առավելագույն քանակությունն ու քննության հանձնման ժամկետը: Կոնկրետ 30 ռոպեով նվազեցվել է աշխարհագրության թեստավորման համար նախատեսված ժամկետը, իսկ առավելագույն միավորը՝ 70-ի փոխարեն մինչեւ 60-ը: Պատմության թեստի առավելագույն 80 միավորը հասցվել է 70-ի:

Նորամուծություն է նաեւ այն, որ քննությունների ընտրական առարկաների թվին ավելացվել է «Քաղաքացիական կրթություն» առարկան:

Բուհերում ընդունվել է որոշում, թե որ ֆակուլտետներում է «Քաղաքացիական կրթություն» առարկան լինելու պարտադիր: Դիմորդներն իրենք են որոշելու «Քաղաքացիական կրթություն» առարկան հանձնելու հարցը:

- Ո՞ր ֆակուլտետներն են լինելու անվճար:

- Այդ հարցն ամեն տարի կարգավորվում է կառավարության որոշմամբ: Դեռեւս կառավարությունը պաշտոնապես չի ներկայացրել այն ցուցակը, թե որ ֆակուլտետներն են լինելու անվճար: Կարծում եմ, որ այդ հարցում նախորդ տարվա օրինակով փոփոխություններ չեն լինի:

- Մասնագիտության ընտրության առումով, ի՞նչ միտումներ են նկատվել: Հաշվի առնելով արդեն իրականացված գրանցումը՝ ո՞ր մասնագիտություններն են առավել գրավիչ դիմորդների համար:

- Մասնագիտությունների ընտրության հարցով առկա միտումների մասին դժվար է խոսել, քանի որ մինչեւ օգոստոսի սկիզբը դիմորդներն իրավասու են փոխելու մասնագիտության հարցով կատարած ընտրությունը: Գրանցված դիմորդների թվում նշանակալի հատված են կազմում նրանք, ովքեր դեռեւս չեն ընտրել ո՛չ բուհը եւ ո՛չ էլ ֆակուլտետը: Իսկ եթե դատենք էլնելով ընդհանուր տվյալներից՝ ապա դիմորդների մեծամասնությունը գերադասությունը տալիս է տնտեսագիտական բիզնեսի եւ իրավունքների մասնագիտություններին:

Ինչպես արդեն նշեցի, դիմորդները քննությունների արդյունքների հիման վրա ժամանակ կունենան առավել պատասխանատու մոտեցում ցուցաբերել ինչպես բուհի, այնպես էլ՝ մասնագիտության ընտրության հարցում:

- Միասնական ազգային քննությունների համար դիմորդների գրանցմանը զուգընթաց, ավարտվեց նաեւ մագիստրատուրայի գրանցումները: Ի՞նչ փոփոխություններ կան այդ առումով:

- Ինչ վերաբերում է մագիստրոսներին, ապա մինչ օրս ունեինք ընդհանուր ունակությունների հինգ տեսակի քննական թեստ: Ուսանողներն իրենք էին ընտրում մասնագիտական ուղղություններին համապատասխան թեստերը: Այս տարի թեստերի տեսակները նվազեցվել են մինչեւ երեքը: Ըստ իս, դա առաջընթաց քայլ է, քանի որ մասնագիտության ընտրությունը կատարվում է քննությունը հանձնելուց հետո: Ուստի, նախորդ տարիների համեմատությամբ, մասնագիտության առումով ուսանողները շատ ավելի լայն ընտրության շրջանակ կունենան:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԷԼԼԻ, ՄԵՉ ՀԻԱՅՐԵՅ ՔՈ ԽՈՐԻՄԱՅ ԵՎ ՃՇԳՐԻՏ ՀԱՅԵՐԵՆԸ...

Այո՛, միշտ հաճելի եւ շոյող է, երբ քո մայրենի լեզվով խոսում է օտարը: Էլ չասենք, երբ խոսում է անթերի՝ շարժելով նույնիսկ բանասերի նախանձը:

Նման հիացմունք առաջացրեց Սանկտ-Պետերբուրգի Թբիլիսի արդեն որերորդ անգամ ժամանած էլլի Պոնոմարյովայի խորիմաց եւ ճշգրիտ հայերենը...

Էլլին 26 տարեկան է, ավարտել է Սանկտ-Պետերբուրգի պետական համալսարանի կովկասագիտության ֆակուլտետը: Ներկայումս նա սովորում է Սանկտ-Պետերբուրգի՝ Մարդաբանության եւ ազգագրության ինստիտուտի ասպիրանտուրայում: Ապագա ազգագրագետը Թբիլիսիում ուսումնասիրում է վիրահայության հասարակական կյանքը, կենցաղը, տարբեր խմբերի փոխհարաբերությունները:

Մեզ հիացրեց էլլիի խորիմաց եւ ճշգրիտ հայերենը...

- Ի՞նչն է Ձեզ ստիպել ընտրել արեւելագիտության ֆակուլտետի հայագիտության բաժինը. պատահականությո՞ւնը, հետաքրքրասիրությո՞ւնը... Գուցե հանգամանքնե՞րը. ասենք՝ այլ ֆակուլտետների համեմատությամբ պակաս մրցակցությո՞ւնը...

- Կարող եմ ասել, որ ինչ-որ տեղ նպաստեցին նաեւ հանգամանքները... Դպրոցից հետո մեծ ցանկություն ունեի սովորել որեւէ օտար լեզու, ի դեպ, ո՛չ եվրոպական, այլ անպայման արեւելյան, որը չլիներ շատ տարածված, ինչը, ենթադրում էի, ինձ հնարավորություն կտար խորանալու: Եվ ահա, արեւելագիտության ֆակուլտետ դիմելիս՝ պարզվեց, որ այստեղ վերաբացվել է 19-րդ դարից մինչեւ խորհրդային տարիները գործող, ապա փակված կովկասագիտության բաժինը: Դա հենց իմ ուզածն էր, ընդունվեցի եւ սկսեցի ուսումնասիրել ե՛լ հայերենը, ե՛լ վրացերենը, բայց շուտով զգացի, որ հայերենն ավելի է ստացվում: Հայերենի ընտրության հարցում մեծ ու վճռական դեր կատարեց իմ լուսահոգի պրոֆեսոր, հայտնի հայագետ եւ բյուզանդագետ Կարեն Յուզբաշյանը...

- Այսինքն, նա Ձեզ հորդորեց ընտրել հայերենը:

- Ո՛չ: Ո՛չ խորհուրդ, ո՛չ էլ հորդոր... Պարզապես, նրա դասախոսություններն այնքա՛ն հետաքրքիր էին, եւ շփույնը նրա հետ՝ այնքա՛ն հաճելի, որ զգացի մեծ ցանկություն, ավելին, ոգեւորություն՝ շարունակելու իր գործը ու զբաղվելու նրա դասախոսությունների ժամանակ կամ նրա հետ գրույցներում լսած ու քննարկած խնդիրներով:

- Ուսանելու տարիներին,՝ հնարավոր դժվարությունների բախվելիս, ի՞նչն է Ձեզ գորակցել, սատարել ու առաջ մղել...

- Գիտե՞ք, որքան էլ անհավատալի թվա, դժվարություն ասածը, հաճույքով է հաղթահարվել... Կոնկրետ, հայ միջմարտային հիշատակարան-ձեռագրերն ուսումնասիրելիս՝ զգացել եմ գեղարվեստական մեծ բավականություն, քանի որ պատմական աղբյուր լինելուց բացի, այդ տեքստերը պարունակում են գեղարվեստական տարրեր: Ի դեպ, հայ իրականության մեջ հիշատակարանները (ձեռագրերի վերջին մասերը) տարբերվում են այլ ազգերի ձեռագրերից նրանով, որ հայ պատմիչները հիշատակարաններում պարտադիր նշում են՝ երբ եւ ում կողմից է պատվիրվել ձեռագիրը, ապա խնդրում են ընթերցողին աղոթել այդ մարդու, ինչպես նաեւ իրենց համար: Այդ ամենը հիշատակարաններում գեղարվեստական հատուկ միջոցներով է մատուցվում, որոնցով փորձում են ազդել ընթերցողի վրա, արժանանալ նրա աղոթքին եւ, այդպիսով, մահից հետո ստանալ մեղքերի քավություն: Հայտնի է, որ, եթե ուրիշն է քո մասին աղոթում, դու ներվում ես Աստծու կողմից: Ասվածի օրինակներից մեկը նրանց հայտնի հորդորն է. «Ձեռքս գնա, դառնա ի հող, Գիրս մնա հիշատակող...»:

- Այս շփույնների ընթացքում՝ իրբեւ



օտար աչք, վիրահայ կյանքի ի՞նչ առանձնահատկություններ եք նկատել:

- Քանի որ համայնքին ծանոթանում եմ նախ պատմական առումով, նկատեցի, որ ժամանակակից փուլին նվիրված գրականությունը շատ քիչ է: Ինչ վերաբերում է առանձնահատկություններին, որքանով զգացի՝ համայնքը ներառում է տարբեր հասարակական խմբեր: Կան եւ լեզվական խնդիրներ. ռուսախոս կամ վրացախոս հայերի ճնշող մեծամասնությունը ոչ միշտ է կարողանում մասնակցել վիրահայ համայնքի տարբեր խավերի, առանձնապես՝ եկեղեցու կողմից անցկացվող միջոցառումներին:

Չեմ կարող լռել դրական իմաստով զարմացնող մի այլ փաստի մասին: Ինձ հանդիպած հայերը, չգիտես ինչու, սովորական ու բնական են համարում իրենց ռուսերենի ու վրացերենի իրաշալի իմացությունը, իսկ իմ հայերենին տիրապետելը զարմացնում է նրանց:

Մի շատ դրական բան էլ եմ նկատել այստեղ, որի համար շատ շնորհակալ եմ՝ մարդկանց հյուրընկալությունը: Շատ գեղեցիկ ու հաճելի է, որ նույնիսկ այսօրվա դժվար պայմաններում, շատ են լսել ու կարդացել, որ թբիլիսցիները քեզ ընդունում են ավանդական հյուրասիրությամբ ու ընդգծված ջերմությամբ, եւ ինքս էլ անձամբ դրանում համոզվեցի:

- Իսկ ի՞նչ էտապում է Ձեր՝ ասպիրանտի, ապագա արհեստավարձ ազգագրագետի աշխատանքը մեր համայնքի հետ:

- Իմ նպատակն է ծանոթանալ Թբիլիսիի հայ միջավայրին, ազգային խմբերի հարաբերություններին, հասարակական ժամանակակից հարցերին: Այժմ իմ աշխատանքն իր նախնական փուլում է: Այդ տպավորությամբ, համայնք իրենից ներկայացնում է մի խճանկար, ուր կան ե՛լ հայախոս, ե՛լ վրացախոս, ե՛լ ռուսախոս հայեր, կան առաքելական ու կաթոլիկ եկեղեցիների՝ իրենց կարծիքներով ու մոտեցումներով պատկանողներ... Ներկայումս խոսել եմ տեղի տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչների, նաեւ հասարակ շարքային թբիլիսահայերի հետ... Առաջիկայում պետք է ուսումնասիրեմ տարբեր սոցիալական խմբերի, տեղի մշակութային կենտրոնների կյանքը: Հասկանալ ինչն է նմարդիկ ուզում մասնակցել այս կամ այն կազմակերպության միջոցառմանը... Ընդհանուր պատկեր կազմելու համար դեռ անելիքներ կան...

- Եվ մի անձնական հարց: Այսքան բան հայերի մասին գիտե՞նալը, կարո՞ղ է նպաստել նրան, որ Ձեր սրտի ընտրյալը, հանկարծ ու հայ երիտասարդը դառնա...

- Այդ հարցում ազգային խտրականության խնդիր հաստատապես չունեմ: Կարելո՞րդ՝ լինի հետաքրքիր անձնավորություն, լավ մարդ...

- Ընդհանրապես ինտաքրքիր հարցազրույցի համար:

Ձրուցեց
ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱՂԱԼՅԱՆԸ

ԾՁ ԾՕ - ä 2 ↑ 2 e Ê 2 Û * 2 ÛÊ 2 ¼ 2 Û * Ê à Ծ Ծ à Ծ Ծ , Û ° Ծ

2 ի 2 Û , à Ծ Û Ä



ՄԱՅԻՍԻ 15-Ը՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ

Լսել եմ, որ մայիսի 15-ը ընտանիքի միջազգային օրն է: Եթե հնարավոր է, պատմեք, խնդրում եմ, թե ե՞րբ եւ ո՞ւմ կողմից է ամրագրվել ընտանիքի օրը:

Վ. Սիմոնյան

Բարունակ

Մայիսի 15-ին աշխարհը նշում է ընտանիքի միջազգային օրը: Ընտանիքի օրն ամրագրվել է 1993թ. Միավորված ազգերի կազմակերպության կողմից: Այս օրվա նշանակությունը մեծ է, այն ուղղված է աշխարհի երկրներին՝ ուշադրություն դարձնելու մարդկային հասարակության ամենափոքրիկ միասնական խմբի՝ ընտանիքի խնդիրներին: Լինելով հասարակության հիմնական ինստիտուտներից մեկը, ընտանիքը

զարգանում եւ փոփոխություն է կրում շրջակա աշխարհի հետ համատեղ: Մարդկությունն իրավամբ բաղկացած է ընտանիքներից: Ընտանիքը մարդկային հասարակության հիմնական տարրն է: Եթե ընտանիքն ամուր է եւ զարգացած, ուրեմն այդպիսին է նաեւ պետությունը, երկրագունդը եւ մարդկությունը: Մարդու կյանքը սկզբնավորվում է ընտանիքում, այնտեղ է նա սովորում դառնալ քաղաքացի, անհատ, մարդ:

2 è à Ծ ã ò Ä Û à Ծ Û

ԿԱՆՈՆԵՐ՝ ԱՋՔԵՐԸ ԱՌՈՂՑ ԴԱՅԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Վերջին ժամանակներում նկատվել է, որ աշքերս սկսում են «հոգնել»: Կարողա՞լիս կամ համակարգչի առջեւ աշխատելիս՝ հաճախ զգացել եմ «ֆոկուսի» խանգարումներ: Ինչպե՞ս վարվել առողջ աշքերի պահպանման համար:



Վ. Դավթյան

Ախալքալաքի

Մեր աշքերի գլխավոր թշնամին բազմապիսի ծանրաբեռնվածություններն են, որոնց արդյունքում աշքերի մկանները կծկվում են: Դրանից խուսափելու համար պետք է հետեւել մի շարք պարզ կանոնների.

է սենյակը մթնեցնել, իսկ երեկոյան հակառակը լույս վառել (կողքից կամ ձեռքից հետեւից): Մինչեւ էկրանն ընկած տարածությունը պետք է էկրանի անկյունագծից 5 անգամ ավելի լինի:

- 1) Ընթերցանության ժամանակ հետեւել, որ դեմքից մինչեւ գիրքն ընկած տարածությունը կազմի 30 սմ-ից ոչ պակաս:
- 2) Թեթքերը պետք է լուսավորված լինեն վերելից եւ ձախից: Եթե ստիպված եք երկար ժամանակ կարդալ, ապա պետք է 5 րոպեանոց ընդմիջումներ անել:
- 3) Ցերեկային ժամերին հեռուստացույց դիտելիս՝ ցանկալի

- 4) Համակարգչի առջեւ անցկացրած մեկ ժամը բավական է, որպեսզի աշքերը հոգնեն: Իսկ այդ վիճակն ուղեղի միջոցով տարածվում է ողջ օրգանիզմի վրա: Դրանից խուսափելու համար էկրանն այնպես տեղադրեք, որպեսզի դրա վրա ցերեկային լույսը չընկնի: Համակարգչի առջեւ երկար աշխատելու դեպքում, յուրաքանչյուր ժամը մեկ 15 րոպեանոց ընդմիջում արեք:

2 è ù Ծ ° 2 ↑ 2 Û

ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴ՝ ԱՎՏՈՍՔԵՆԱ ԳՆՈՂՆԵՐԻՆ



Կինս վերջերս վարորդական վկայական ստացավ, եւ հիմա ցանկանում ենք գնել ավտոմեքենա. որի դեկին հենց ինքն էլ նստելու է: Անկեղծ ասած, չգիտեմ կնոջ համար ո՞ր մեքենան է հարմար: Գույ՛ն օգնեք:

Հ.Ա.

Նինոսմինդա

Մեր օրերում կինը՝ դեկին սովորական երեւոյթ է: Չնայած տղամարդկանց կողմից դրսեւորվող փոքր-ինչ ծաղրական վերաբերմունքին, մեքենա վարող կանայք լիովին գլուխ են հանում վարորդական հոգսերից եւ դեկին իրենց բավականին վստահ են զգում: Սակայն, նրանց համար օգտակար խորհուրդներն ավելորդ չեն լինի:

Թվում է՝ շատ հեշտ է. ավտոմեքենա ընտրելիս՝ պետք է ուշադրություն դարձնել դրա տեխնիկական բնութագրերին, վիճակին եւ ընդունելի գնին: Իհարկե կարելու է, որ մեքենան պարզապես դուր գա: Բայց կա նաեւ ինչ-որ անբացատրելի բան, երբ զգում ես, որ տվյալ մեքենան քեզ պարզապես մագնիսի պես ձգում է... Մեքենա վարողները ասես զգում են այդ անբացատրելի «ընկերոջ» բնավորությունը եւ նույնիսկ իրենց ավտոմեքենային անուն են տալիս: Իսկ բնավորությամբ մեքենաները լինում են «տղա» կամ «աղջիկ», «աշխատավոր տղա», «աշխատավոր աղջիկ», VIP դասի... Կարելու է զգալ մեքենան, այդ ժամանակ նա ձեզ ոչ միայն չի դավաճանի, այլեւ դժվարին պահին կօգնի:

ՄԵՐ ԿՅԱՆՔԻ ԱՆԲԱԺԱՆ ՈՒՂԵԿԻՑԸ՝ ՍԹՐԵՍ

Ինչպես պայքարել սթրեսի դեմ



Սթրեսը (անգլ. stress - «լարվածություն», «ճնշում» բառից) մեր օրգանիզմի պատասխան ռեակցիան է այն լարվածություններին, որոնք զալիս են արտաքին աշխարհից կամ մեր իսկ ներաշխարհից: Սթրեսի միջոցով մեր օրգանիզմը պաշտպանում է իրեն հոգեկան եւ ֆիզիկական ճնշումներից:

Մեր կյանքում միշտ կարող են սթրեսի հանգեցնել, քանի որ օրգանիզմին ժամանակ է պետք այդ ամենին ադապտացվելու համար:

Սթրեսի հիմնական ախտանշանները

Սթրեսի ախտանշաններն ազդանշան են այն բանի, որ կյանքում ժամանակն է ինչ-որ բան փոխել՝ ավելի խորը մտածելով սեփական ապրելակերպի մասին, եւ կյանքի դժվարությունների դեմ պայքարի արդյունավետ տարբերակներ փնտրել:

Սթրեսի հաղթահարման պրոցեսում հարկավոր է նախեստաց ճշտել դրա առաջացման պատճառը: Սթրեսի կարող են հանգեցնել ֆինանսական խնդիրները, միջանձնային կոնֆլիկտները, խոչընդոտները, լարված եւ միօրինակ աշխատանքը, հիվանդությունները եւ այլն: Սակայն հարկ է նշել, որ սթրեսների հիմնական պատճառը ոչ թե արտաքին իրադարձություններն են, այլ դրանց նկատմամբ մեր ռեակցիաները, իսկ մեր ռեակցիաները մեր իսկ մտածելակերպի արդյունքն են: Մենք չենք կարող լիովին վերահսկել մեզ հետ կապարկվող բոլոր իրադարձությունները, բայց ի գործ ենք փոխել մեր մտածելակերպն ու վերաբերմունքն արտաքին աշխարհի հանդեպ:

Սթրեսի ախտանշաններից են. ճնշվածությունը, գրգռվածությունը, հոգնածությունը, տագնապը, վախը, մեղավորության զգացումը, միայնակության եւ անպաշտպանության զգացողությունը, տրամադրության կտրուկ փոփոխությունները, առանց հիմնավոր պատճառի ընկճվածության զգացումը, ինչ-որ բան անելու ցանկության բացակայությունը, ցածր ինքնագնահատականը, անվճռականությունը, նախաձեռնողականության կորուստը, վստահության կորուստը, քնի խանգարումները, շատակերությունը կամ վատ ախորժակը:

(Շարունակելի)

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԿ

ՀԱՄԱՐՎՈՒՄ ԵՐ ԹՈՒՆԱՎՈՐ, ԴԱՐՉԱՎ ԱՄԵՆԱՀԱՄԵՂԸ



Եվրոպայում լուրջ մի ժամանակ թունավոր էր համարվում: Իսպանացիներն ու պորտուգալացիները լուրջ կանխարգելիչ չին աշխարհի դեռեւս 16-րդ դարում:

Գեղեցիկ տերեւներով եւ վառ գույնի պտուղներով այս բույսը սկսեցին օգտագործել դեկորատիվ նպատակներով: Թերեւս այդ անվստահության պատճառն այն էր, որ իր պատմական հայրենիքում՝ Մեքսիկայում, բնիկներն այն ուտելի չէին համարում:

Բույսն այնուհետեւ տարածվեց Եվրոպայի երկրներում: Այն աճեցնում էին լուսամուտագրգեղին, ծաղկամանների մեջ, տնկում էին ծառուղիների երկայնքով: Այգեգործները, որոնք խիզախեցին համտեսել լուրիկի պտուղները, վստահեցնում էին, որ դրանք սրտխառնոց են առաջացնում:

Այս թյուր կարծիքի վերացման գործում իրենց ավանդն ունեն իսպանացիները: Վկայություններ են հասել այն մասին, որ Իսպանիայում այս հյութեղ պտուղները, առանց որեւէ վնաս պատճառելու, արդեն իրենց յուրօրինակ տեղն են զբաղեցրել խոհարարական արվեստում 17-րդ դարի սկզբին:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ

Չարն էլ է միշտ ապրում անմեռ, անէ՛ծք նրա չար գործին, Որդիդ լինի, թե հերն ու մեր, թե մուրազով սիրած կին...

ՉՈՎԿՆՆԵՆ ԹՈՒՄԱՅԱՆ (1869-1923)
Չայ բանաստեղծ

Չար բախտից այսպես մատնված դատի՛ իույսին եմ դիմում, որ ինձ ազատի:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԵՆԱԿՆԱՎԱՅԵ (1786-1846)
Վրաց բանաստեղծ

Բնության մեջ ամեն ինչ իմաստուն կերպով է մտածված ու կանոնավոր, եւ յուրաքանչյուրը պետք է զբաղվի իր գործով. կյանքի բարձրագույն արդարությունն այդ իմաստ-

նության մեջ է:

ԼԵՆԱՄԱՐԴ ԴԱ ՎԻՆՉԻ (1452-1519)
Իտալացի գեղանկարիչ

Ավելի անտանելի բան չկա, քան այն ծերունին, որի երկարատեւ կյանքի միակ արժանիքն իր տարիքն է:

ՄԵՆԵՎԱ (մ.թ.ա. 4-րդ դար - մ.թ. 65)
Ստոիկ փիլիսոփա

Նա, ով ամուսնանում է հարստության համար, վաճառում է իր ազատությունը:

ՉԵՐԲԵՐՏ (1920-1986)
Ամերիկացի ֆանտաստ գրող

Կինն ընտանիքի փրկությունն է կամ կործանումը:

ԱՄԻԵԼ (1882-1946)
Չրեա հասարակական գործիչ

Լավ ընտանիքն այն է, ուր ամուսինն ու կինը ցերեկը մոռանում են, որ իրենք սիրեկաններ են, իսկ գիշերը մոռանում են, որ ամուսիններ են:

ՌՈՍԱՆԱ (1868-1918)
Ֆրանսիացի պոետ, դրամատուրգ

Երբ խմում ես՝ չափո իմացիր, այլապես կարող ես թիչ խմել:

Ա.ԱՎԱԳՅԱՆ
«Վրաստան» թերթի ընթերցող



¼ 2 յ ° թ ի 2 է ԱԷ

* Հետաքրքիր է եթե ես մտնեմ ու դժոխք ընկնեմ, որքա՞ն ժամանակ կանցնի, մինչեւ ես հասկանամ, որ աշխատավայրում չեմ:

* Ես չգիտեմ, թե ինչպիսի ընկեր եմ, սակայն լավ թշնամի եմ:

* Բարի գործ ես արել՝ քաշվիր մի անվտանգ տեղ, որպեսզի երախտագիտության հարվածող

ալիքը քեզ չկաչի:

* Կնոջ համար նվեր ընտրելը սովորաբար ավելի դժվար է լինում, քան թե հենց կին ընտրել:

* Եթե որեւէ մեկը քեզ հանկարծ ասի՝ փորձիր ինձ ծիշտ հասկանալ, ապա իմացիր, որ այդ մարդը քո հանդեպ ինչ-որ սրիկայություն է արել եւ հիմա կսկսի արդարանալ:

* 70 կիլոգրամ ավելի քաշից ազատվելու լավագույն միջոցը ամուսնալուծվելն է:

* Մենք ավելի շատ սիրում ենք քննարկել այն իրերի թերությունները, որոնք ի վիճակի

չենք գնելու:

* Միշտ պետք է մարդկանց ասել այն, ինչ նրանց մասին մտածում ես: Եշտմարտությունը սուրբ գործ է, իսկ կապտուկները, մի-եւնույն է, մի շաքարավազ ընթացքում անցնում են:

* Հաջողության հասած յուրաքանչյուր տղամարդու թիկունքին կանգնած են գոհ կինը եւ զարմացած զոքանջը:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՅԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ԸՆԴՊԾԿԵՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

Մայիսի 11-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը ընդունեց Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) նախագահ Սոււա Չակրաբարտիին եւ նրա գլխավորած պատվիրակությանը:



Հայաստան-Եվրամիություն համագործակցության զարգացմանը, ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցությունից հետո մեր երկրի զարգացման նոր հնարավորություններին ու հեռանկարներին:

Հանդիպմանը զրուցակիցներն անդրադարձան Հայաստանի տնտեսության ներկայիս վիճակին, տնտեսության մեջ իրականացվող բարեփոխումներին, այդ թվում գործարար եւ ներդրումային միջավայրի բարելավման ուղղությամբ մինչ այժմ իրականացված աշխատանքին ու առաջիկա ծրագրերին: ՎԶԵԲ նախագահը պատրաս-

տակամություն է հայտնել աջակցել գործարար միջավայրի բարելավման ուղղությամբ Հայաստանի կառավարության ջանքերին բանկի ամբողջ գործիքակազմով: Կողմերը քննարկեցին Հայաստան-ՎԶԵԲ համագործակցության ընդլայնման հնարավոր ուղղություններն ու առաջնահերթությունները, անդրադարձան նաեւ Հայ-

ԿՐԹԱԿԱՆ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Երեւանում մեկնարկել է Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի նախարարական գագաթաժողովը եւ Բոլոնիայի քաղաքականության 4-րդ ֆորումը:

Բոլոնիայի գործընթացի առանցքային նպատակներից է Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի ստեղծումը, որը կոչված է խթանելու Եվրոպական բարձրագույն կրթա-

կան համակարգի մրցունակությունը եւ գրավչությունը, ինչպես նաեւ ուսանողների շարժունությունն ու աշխատանքի հնարավորությունները: Բոլոնիայի գործընթացն ընդգրկում է

47 եվրոպական երկիր, 10 խորհրդատու կազմակերպություն եւ այլ գործընկեր կազմակերպություններ: Բոլոնիայի գործընթացի հիմնական բաղադրիչներն են՝ եռաստիճան կրթական համակարգը, որակավորումների շրջանակը, կրեդիտների կուտակման եւ փոխանցման համակարգը, դիպլոմի հա-

վելվածը, որակի ապահովումը, փոխճանաչումը, համատեղ աստիճանների հավատագրման եվրոպական մոտեցումը: Գագաթաժողովի մասնակիցներին ողջունեցին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը եւ կրթության ու գիտության նախարար Արմեն Աշոտյանը:



ԱՄՓՈՓԿԵՑԻՆ ՀԱՅ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ ՆԱԽԱԳԾԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հայաստանից ու Թուրքիայից սկսնակ ձեռներեցների մասնակցությամբ չորս ամիս տևած «Տեխնոլոգիաներ առանց սահմանների» նախագիծը Երեւանում ամփոփել է արդյունքները:

Մ ա ռ լ ի ասուլիսի ընթացքում, նախագիծը կազմակերպիչները ներկայացրել են այս ընթացքում կատարած աշխատանքն ու դրա արդյունքները, ինչպես նաեւ հայտարարել հաղթող

թիմին: Նախագիծը համաֆինանսավորում է ստացել Եվրամիության կողմից: Հայերից եւ թուրքերից բաղկացած յոթ հոգանոց ժյուրիի որոշմամբ, հաղթող ճանաչվեց թուրքական «Էվրեկա» թիմը աղբահավաքման օպտիմալացմանը նվիրված նախագիծ առաջ քաշելու համար:

Թիմին ծրագրի իրականացման համար կտրամադրվի 4 հազար ԱՄՆ դոլար ֆինանսական աջակցություն: Մրցանակներ հանձնվեցին նաեւ «Լավագույն ներկայացում», «Ամենաիրատեսական գաղափար», «Լավագույն տեխնոլոգիական լուծում» անվանակարգերում:



Փոխնախարարը հայտնեց, որ ծրագրի հավակնոտ գաղափարներից է կապել Պարսից ծոցը Սեւծովյան նավահանգիստների հետ՝ կրճատելով բեռների փոխադրման ժամանակահատվածը շուրջ 1-1,5 ամսով:

«ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ» ՆԱԽԱԳԻԾԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԲԱՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱ

«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք» ծրագիրը հավակնում է դառնալ տարածաշրջանային: Այս մասին հայտնեց Հայաստանի տրանսպորտի եւ կապի փոխնախարար Արթուր Առաքելյանը մայրուղու կառուցման ընթացքի վերաբերյալ Ազգային ժողովում խորհրդարանական լուսնների ժամանակ:

Խըմբեման հուշագիր, որն ուղարկվել է իրանյան գործընկերներին: «Վրացի գործընկերների մոտ այս հարցերը եւս բարձրացվում են, նրանք քաջ գիտակցում են, որ սա կարելու էր ծրագիր է, ու կարելու է իրենց համար որպես տարանցիկ երկիր հանդես գալու առումով»,- մշեց Արթուր Առաքելյանը:

«Մենք աշխատանքներ ենք տանում, որ մեր հարեւան երկրները՝ Վրաստանն ու Իրանը, միանան այս ծրագրին, այն ապահովի Հայաստանի՝ որպես

տարանցիկ երկիր, դառնալու խնդիրը»,- ասաց փոխնախարարը: Նրա տեղեկացմամբ, Իրանի հետ բանակցությունների արդյունքում կազմվել է փո-



ԳՈՐԾԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎ ԾՐԱԳՐԵՐ

Հայաստանի աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանը մասնակցել է ընթացիկ տարվա առաջին Աշխատանքի տոնավաճառին: Երջելով տոնավաճառի տաղավարներով՝ նախարարը ծանոթացել է գործատուների կողմից առաջարկվող աշխատատեղերին, աշխատանքային պայմաններին, գրուցել աշխատանք փնտրող քաղաքացիների հետ:

Ն ա խ ա ռ ա թ ի խոսքերով, Աշխատանքի տոնավաճառը զբաղվածության ակտիվ ծրագրերից մեկն է եւ հավելեց, որ կան զբաղվածության պետական բյուջեյով իրականացվող եւս 12 ակտիվ ծրագ-

րեր եւ տարվա կտրվածքով շուրջ 2,3 մլրդ դրամ զբաղվածության ծրագրեր են իրականացվում: «Ամփոփելով 2014 թվականի տվյալները՝ ասեմ, որ զբաղվածության ակտիվ ծրագրերի միջոցով 11000 անձ գտել է աշխատանք: Ամելիքներ շատ կան այս ոլորտում, սակայն այս պահին տարվող աշխատանքները գնահատում են

բարձր»,- ընդգծել է նախարարը: Հայաստանի աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության Զբաղվածության պետական գործակալության կողմից իրականացվող Աշխատանքի տոնավաճառին մասնակցում են տնտեսության տարբեր ոլորտները ներկայացնող յոթ տասնյակից ավելի գործատուներ:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼ Է ԱՎԵՏԻՍՅԱՆՆԵՐԻ ՄՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՎԱԼԵՐԻ ՊԵՐՄՅԱԿՈՎԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ավետիսյանների իրավահարողների ներկայացուցիչ-փաստաբանները ներկայացնում են փաստեր, որոնց համաձայն, մարդասպանը Վալերի Պերմյակովն է:

Դատազենետիկական փորձաքննությամբ, սվին դանակի պատյանի, բռնակի ու գոտու վրա հայտնաբերվել է Վալերի Պերմյակովի ԴՆԹ-ն՝ 99,99 տոկոս հավանականությամբ: Սվին դանակի վրա արյուն է եղել, որը, ըստ զենետիկական փորձագետների, Արաքսյա Պողոսյանի ու Սերյոժա Ավետիսյանի կողմից է թողնված: Այդ նույն դանակի վրա Պերմյակովի ԴՆԹ-ն է, ու բացարձա-

կապես այլ ԴՆԹ չի հայտնաբերվել: Այս ամենը հնարավորություն է տալիս եզրակացնել, որ այդ դանակը վնասվածք պատճառելու պահին գտնվել է Վալերի Պերմյակովի ձեռքին: Ինքնաձիգից կրակվել է 28 փամփուռ, եւս 2-ը եղել են ինքնաձիգում, մեկը՝ պահուսնակի, մյուսը՝ զենքի մեջ, որը չի կրակվել: Դրանց վրա եւս եղել է Վալերի Պերմյակովի ԴՆԹ-ն: Դեպ-

քի վայրի բնութագրից, իրականացված գործողություններից, ինչպես նաեւ փորձագետների կողմից ներկայացված կրակոցների ուղղություններից ելնելով՝ կարելի է հանգել այն մտքին, որ կրակոց արձակվել է մեկ հոգու կողմից: Հիշեցնենք, որ Ավետիսյանների ընտանիքի 6 անդամների սպանությունը տեղի է ունեցել 2015 թվականի հունվարի 12-ի վաղ առավոտյան, ժամը 06:00-ի սահմաններում, նրանց մահը վրա է հասել իրազենային վնասվածքներից: Ավետիսյանների ընտա-

նիցից ողջ էր մնացել 6 ամսական փոքրիկը՝ Սերյոժա Արմենի Ավետիսյանը, ով կտրող-ծակող գործիքից ստացած վնասվածքներով տեղափոխվել էր բժշկական կենտրոն, այնուհետեւ, յոթ օր հետո մահացել էր: Նշանակվել էին դատաբժշկական, դատատոքսիկոլոգիական, դատաձգաբանական փորձաքննություններ: Կասկածյալ Վալերի Պերմյակովին ռուս սահմանապահները հայտնաբերել են հայ-թուրքական սահմանը հատելու փորձ կատարելիս եւ հանձնել 102-րդ ռուսական բազայի իրամամատարությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱԶԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Մայիսի 9-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը Մոսկվայում մասնակցեց Հայրենական մեծ պատերազմում հաղթանակի 70-րդ տարեդարձին նվիրված փոնակյան միջոցառումներին: Հայաստանի նախագահը կարմիր հրապարակում, բազմաթիվ այլ երկրների բարոյաստիճան պատվիրակությունների ղեկավարների հետ, դիպուկ Հաղթանակին նվիրված զորահանդեսը, ծաղիկներ դրեց Անհայր զինվորի գերեզմանին, որից հետո կրեմլի Մեծ պալատում մասնակցեց հորելյանի կապակցությամբ ՌԳ նախագահի փոնակյան ընդունելությանը:

Մայիսի 10-ին Սերժ Սարգսյանը կարմիր հրապարակում այցելեց Մարշալ Հովհաննես Բաղդամյանի գերեզմանին, ծաղկեպսակ դրեց եւ հարգանքի փորձ մատուցեց մեծ զորավարի հիշատակին:

ՀԱՐԳԱՆԵՐԻ ՏՈՒՔԸ՝ ՇԵՐՈՍԵՆԵՐԻ ՀԻՔՏԱԿՐԵ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գրնվող Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանի գլխավորած պաշտոնական պատվիրակությունը Սյրեփանակերտում մասնակցեց Հայրենական մեծ պատերազմում տրամադ հաղթանակի 70-րդ տարեդարձին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակի եւ Շուշիի ազատագրման 23-ամյակին նվիրված փոնակյան միջոցառումներին:

Միջոցառումների մասնակիցները Սյրեփանակերտի հուշահամալիրում ծաղիկներ ու ծաղկեպսակներ դրեցին Հայրենական մեծ պատերազմում եւ Շուշիի ազատագրման ժամանակ զոհված ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշարձանին: Բաղաձային հուշահամալիրում, զինվորական նվազախմբի նվազակցությամբ եւ ԼԴՀ ՊԲ Պատվո պահակախմբի մասնակցությամբ, փրդի է ունեցել հանդիսավոր քայլերը: Հայաստանի վարչապետն այնուհետեւ այցելեց հուշահամալիրի հարեւանությամբ գրնվող Արցախյան գոյամարտում զոհված ազատամարտիկների գերեզմանատուն, ծաղիկներ դրել նրանց շիրիմներին՝ հարգանքի փորձ մատուցելով ազատամարտիկների հիշատակին:

ՎԵՐԱՀԱՍՏԱՏՎԵՑ ՀԱՅՈՑ ԾԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՔԱՅՄԱՆ ԳԻՐԶՈՐՈՇՈՒՄԸ

Կանադայի Սեմաթը վերահաստատել է դիրքորոշումը Հայոց ցեղասպանությունը ճանաչելու հարցում վերահաստատելով 2002 թվականի հունիսին ընդունած բանաչելը: «Պաշտոնապես ճանաչելով Հայոց ցեղասպանությունը՝ Կանադան հավատարիմ է մնում այն սկզբունքներին, որոնք մենք տրամադ են ողջ աշխարհում: Ցանկացած երկիր, որը ցանկանում է ճնշել իր անցյալը, ցանկացած երկիր, որը չի առերեսվում իր անցյալին, չախտղման լուրջ ռիսկի է ենթարկում սեփական պատմությունից իրենց ազատելու հնարավորությունը»,- իր հայտարարության մեջ նշել է սեմաթոր Թանի Նայի Նգոն: Նա ընդգծել է, որ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին «այս ծանրագույն հանցագործությունը մնում է անպարասխան, քանի որ Թուրքիան հրաժարվում է այն ճանաչել»:

ԱՎՍՈՒՅՆ ՏՎԱԿԱՐԸ՝ ՎԵՆԵՏԻՎԵՐ ԲԻՆԵԱԼԵՆՈՒՄ

Ժամանակակից արվեստի Վենետիկի բինեալում լավագույն ազգային տաղավար է ճանաչվել Հայաստանի տաղավարը՝ արժանալով «Ոսկե առյուծ» մրցանակին: Հայկական տաղավարը նվիրված էր Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին: Հայկական սփյուռքի 18 արվեստագետների աշխատանքներ են ներկայացվել 2015 թվականի Վենետիկի բինեալում: Եվրոպայի, Ասիայի, Ամերիկայի մեծ ու փոքր քաղաքներում սրբեղծագործող այս արվեստագետներին միավորում է իրենց ազգությունը: Բինեալի տաղավարի համադրողն է Ադելինա Կյուբերյան ֆոն Ֆյուրթենբերգը:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

24.05.2015թ. Հոգեգալուստ (Պենտեկոստ)

Առաքյալների վրա Սուրբ Հոգու իջման հիշատակության Տոնն է, որ տեղի է ունեցել Սուրբ Հարության հիսուներորդ օրը: Այդ պատճառով էլ Հոգեգալուստը միշտ տոնում են Ջատկից հիսուն օր հետո: Սուրբ Հոգին Սուրբ Երրորդության երեք անձերից մեկն է, համագո եւ հավասար Հորը եւ Որդուն:

ՄԱՅԻՍ



Հետեւաբար, Հոգեգալուստի հիշատակումը մեզ կոչ է յուրաքանչյուր հավատացյալին՝ հպարտությունից խուսափել եւ աստվածային շնորհներով միայն բարի գործեր կատարել: Երկուշաբթիից սկսվում է եղիական պահքը:

Հայ Առաքելական Եկեղեցու կողմից սահմանված տարվա չորս եղանակի պահքից սա ամառնամուտի շաբաթապահքն է: Ինչպես մյուս եղանակների պահքերը,

Եղիական պահքը եւս եկեղեցական որեւէ տոնի պատրաստություն չէ: Ջատկի օրվա փոփոխման հետ պահքի սկիզբը կարող է փոփոխվել մայիսի 11-ից մինչեւ հունիսի 14-ն ընկած ժամանակահատվածում: Մյուս եղանակների պահքերի մեջ, այս պահքը եւս տեւում է 5 օր՝ երկուշաբթիից մինչեւ ուրբաթ:

Քրիստոնեական եկեղեցում շնորհի վարդապետությունը կապված է Սուրբ Հոգու հետ: Ըստ այդ վարդապետության, յուրաքանչյուր առաքինություն աստվածային պարգև է, որը տրվում է հավատացյալին Սուրբ Հոգուց, եւ որեւէ առաքինության վերագրումը սեփական անձին եւ ոչ թե Աստծուն, հպարտության տանող մեծ մեղք է:

ԵՎՐԱՏԵՍԻԼ - 2015

ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է «ԿԱՌՈՒՅԵԼՈՎ ԿԱՄՈՒՐՁՆԵՐ» ՓԱՌԱՏՈՆԸ



Մայիսի 19-ին Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում, «Կառուցելով կամուրջներ» խորագրի ներքո, մեկնարկում է «Եվրատեսիլ-2015» երգի փառատոնի առաջին կիսաեզրափակիչը, իսկ եզրափակիչը կանցկացվի մայիսի 23-ին:

Երգի մրցույթին մասնակից 40 երկրների ներկայացուցիչների թվում են Վրաստանը ներկայացնող Նինո Սուբլատին, որը հանդես կգա «Warrior» երգով եւ Հայաստանի դրոշի ներքո «Face The Shadow» երգի ներկայացմամբ «Genealogy» խումբը (թարգմանաբար՝ «Առերեսվիր սովերին»): Երկրագնդի 5 աշխարհամասերը խորհրդանշող խմբի կազմում են Հայաստանի վաստակավոր արտիստուհի Ինգա Արշակյանը, Եսայի Ալթունյանը, Թամար Կապրելյանը, Վահե Թիլբյանը, Ստեփաննա Կարամյանը:



Ֆանի Թոփալյանը եւ Սերի-Ջին Օ'Ռոյտերի Վաստաբանը: Միմյանցից տարբեր ոճերով 6 երգիչների միավորում են երաժշտությունն ու արմատները, սերն ու համերաշխությունը:

ՑՈՒՑԱՅՈՒՆՆԵՐ

«ՄԵՐԳԵՅ ՓԱՐԱՋԱՆՈՎ - XXI ԴԱՐԻ ԵՐԱՉ» ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Թբիլիսիի «Քարվազ» պատմության թանգարանում մայիսի 18-ից մինչեւ հունիսի 19-ը տեղի կունենա «Մերգեյ Փարաջանով-XXI դարի երազ» միջազգային ցուցահանդեսը:



Այս կապակցությամբ հրապարակված հաղորդագրության մեջ նշվում է.

«Ցուցահանդեսն իրենից ներկայացնում է մուլտիմեդիական ինստալացիա-կոլաժ, որը միավորում է ցուցասրահի տարածությունը՝ առաջադեմի, խոհածությունների հավաքածու-արտացոլում ու ինտերակտիվներ ռեժիսոր եւ նկարիչ Սերգեյ Փարաջանովի մասին, ով ծնվել է Թբիլիսիում եւ մայրաքաղաքի պատմության անկապտելի մասն է»:

Ցուցահանդեսի կազմակերպիչները՝ Կիելի Երազների թանգարանն իր հիմնադիրների՝ հոգեվերլուծողներ Վիկտորյա Դանիելյանի եւ Տատյանա Ցվելոդուբի գլխավորությամբ, որոշել են տալ մեծ վարպետի ստեղծագործության իրենց մեկնաբանումը:

«Անցյալ դարի արտ-օբյեկտները, արտեֆակտները՝ Թբիլիսիի պատմության թանգարանի ֆոնդի արխիվը, դի-

մանկար-լուսանկարները, կինեմատոգրաֆիական հարթակները, ֆիլմերի պոստերները, ֆիլմերի հետահայաց ցուցադրությունները կբացահայտեն Մերգեյ Փարաջանովի կյանքի մասին առաջադեմի մթնոլորտը»,- ասված է հաղորդագրության մեջ:

Ցուցահանդեսում կներկայացվեն հայտնի նկարիչ-կոլաժիստի ընկերների, լուսանկարիչների եւ այն նկարիչների աշխատանքները, որոնք ոգեշնչվել են Մերգեյ Փարաջանովի ստեղծագործությամբ:

Ծրագիրն իրագործվում է Վրաստանի մշակույթի եւ հուշարձանների պահպանության նախարարության ու Թբիլիսիի թաղաքապետարանի Մշակութային միջոցառումների կենտրոնի օժանդակությամբ:

ՄՊՈՐՏ

ՌԵԳԻՍՏՐԱՆԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՑԿԱՑՎԻ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Մինչեւ 20 տարեկանների ռեգրիստի աշխարհի 2017 թվականի առաջնությունը կանցկացվի Վրաստանում: Մրցաշարի հանդիպումները կանցկացվեն Թբիլիսիում եւ Բաթումում: Այդ մասին հայտարարեց ռեգրիստի միջազգային խորհրդի նախագահ Բեռնար Լապարը:

Վրաստանի ռեգրիստի խորհրդի նախագահ Գիա Նիժարաձեի խոսքերով, առաջնության անցկացումը հիանալի առիթ է մարզածեղի զարգացման համար: «Մրցաշարը կամրակցի մեր միջազգային վարկանիշը, եւ հուսով եմ, կնպաստի զբոսաշրջության զարգացմանը»,- ասաց Գիա Նիժարաձեի:

ԳՈՐԻԻ «ԴԻԼԱՆ» ՎՐԱՍՏԱՆԻ ԶԵՄՊՈՆՆ

Վրաստանի ֆուտբոլի ազգային առաջնության ավարտից երկու տուր շուտ, Գորիի «Դիլան» դարձավ երկրի չեմպիոն: Դա հայտնի դարձավ նրանից հետո, երբ Սամոնեղիայում «Դիլան», պարտության մատնելով տեղի թիմին, հավաքեց 60 միավոր եւ անհասանելի դարձավ մրցակիցների համար:

Առաջնության արժաթե մեդալին հավակնում է Թբիլիսիի «Դինամոն»:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՍՏԵՓԱՆՏԵՍԻԼ-ԼԱՐՍ ԱՎՏՈՋԱՆԱԳՐՈՂԸ ԲԱՅ Է

Վրաստանի ՆԳ նախարարության արտակարգ իրավիճակների դեպարտամենտից ստացված տեղեկատվության համաձայն, Ստեփանտեսիլ-Լարս ավտոճանապարհը բաց է բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների համար:

Վրաստանի ՆԳ նախարարության արտակարգ իրավիճակների դեպարտամենտից ստացված տեղեկատվության համաձայն, Ստեփանտեսիլ-Լարս ավտոճանապարհը բաց է բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների համար:

Table with 6 columns and 10 rows containing numbers 1 through 55 in a grid pattern.

Խ Ա Չ Բ Ա Ռ

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ. 7.Չաղանալ: 9.Համակրել, գուրգուրել: 10.Գյուղ Վրաստանում, Ծալենցիխայի մունիցիպալիտետում: 11.Քաղաք Գերմանիայում: 13.Քաղաք Իսրայելում: 16.Դերասան Մկրտիչ Արզումանյանի մականունը: 17.Թռչնի ձագ: 19.Լատինաամերիկյան պար: 22.Չարագուշակ թռչուն: 24.Անորենի որսորդություն: 25.Սահուն: 27.Այցելող մարդ: 29.Անոթային սուր անբավարարության տեսակներից: 32.Նոր Ձեւանդիայի բնիկները: 33.Տարածք երկրի մակերեսի վերելում: 35.Հայկական մանկապատանեկան թերթ: 38.Անձնական դերանուն: 40.Գյուղ Հրազդանի շրջանում: 41.Աք: 44.Ծնոտ: 47.Պետություն ...: Լանկա: 48.Հիսուսին մատնող առաքյալը: 50.Երնել: 51.Դերասան ... Ջեքման: 52.Հին քաղաք Միջագետքում: 53.Ցորենի հատիկի կեղեղը: 54.Կրաքարի այրումից ստացվող նյութ, որն օգտագործվում է շաղախի մեջ: 55.Երգչուհի ... Հարությունյան: ՈՒՂԱՆԱՅԱՑ. 1.Ֆրանսիացի բանաստեղծ ... Ապոլիներ: 2.Գարսեւանը՝ կարծ: 3.Թզուկ, թերաճ: 4.Բախտ, ճակատագիր: 5.Իոնացող ճառագայթման կլանված չափաբաժնի չափման միավոր Միավորների միջազգային համակարգում: 6.Վրաց հաղորդավար եւ դերասանուհի ... Բաբլուանի: 8.Թուրքի տղա: 12.Անթե: 14.Դաբաղող նյութ: 15.Նյարդ: 18.Հսկա պարկ: 19.Վարժ, ընտելացած: 20.Նորածնություն: 21.Կարծես: 23.Ասելու բան: 26.Նյութ հետագա մշակման համար, կիսաֆաբրիկատ: 28.Զոլոտի տնակ: 29.Մարգածե: 30.Վրաց դերասանուհի ... Քավժարածե: 31.Անգլիական մանրադրամ: 34.Անչափ գործը թույլ: 36.Աղածո: 37.Ալազիլ բոյով ծառ: 39.Կրակ: 42.Կոկորդի գեղձ: 43.Լույսի եւ մաքրության աստվածը հայոց դիցարանում: 45.Լատինական այբուբենի տառ: 46.Կոփելու գործիք: 48.Գետի հովտի հատակի մաս՝ զբաղեցված ջրի հոսքով: 49.Մետաղյա հյուսնական գործիք փայտի մեջ փորածքներ անելու համար: Կազմեց ԷԼԼՍ ԱՍՈՒՐԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ. 3.Ոլորտ: 7.Գազատար: 10.Հարու: 11.Իգոր: 12.Ցիցերոն: 15.Բլիթ: 18.Վիմի: 21.Վեգա: 23.Աքար: 25.Պերն: 26.Ասորի: 27.Սար: 28.Բինա: 29.Ունակ: 30.Ինեմ: 31.Փեշաք: 33.Ասիա: 34.Աշոտ: 35.Ռեւել: 36.Մայ: 39.Լքել: 41.Նիգերիա: 43.Դրապ: 44.Դուն: 45.Արաքսյա: 48.Կատյա: ՈՒՂԱՆԱՅԱՑ. 1.Խլեզ: 2.Արև: 4.Էգուց: 5.Արի: 6.Մարի: 9.Գորի: 13.Ինգա: 14.Ոտքի: 16.Լամբադա: 17.Թվանշան: 18.Վրունգել: 19.Նեսկաֆե: 20.Դեբեղ: 22.Ասպետ: 23.Արջառ: 24.Սրիկ: 31.Փոթի: 32.Կեչի: 37.Յորթ: 38.Սենթ: 40.Քամի: 41.Նպատ: 42.Ապար: 46.Աբաս: 47.Սույն:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774 www.vrastan.ge E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական № 4 4 - 1439 «ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ВРАСТАН» Тбилиси, Грузия <VRASTAN> Georgia, Tbilisi Индекс 66445